Նոր Համարներ Ընտանեկան Բռնության Զոհերի Համար

Բովանդակություն

Ինչպե՞ս դիմել նոր համարի համար՝	2
Ձեր քարտի վրա Ձեր անվան փոփոխումը՝	3
Ձեզ անհրաժեշտ վկայության տրամադրում՝	4
Ձեր գրանցումներին մուտքի հնարավորության արգելափակում՝	4
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	4

Յուրաքանչյուր ոք կարող է ընտանեկան բռնության զոհ դառնալ: Եթե Դուք ընտանեկան բռնության, ճնշման, ոտնձգության կամ կյանքին վտանգ սպառնացող իրավիճակների զոհ եք դարձել, ապա Սոցիալական Ապահովության Ծառայությունը կարող է Ձեզ օգնելու հնարավորություն ունենալ:

Հանրային գիտակցությունը բարձրացնող քարոզարշավները շեշտադրում եմ, թե որքան կարևոր է զոհ դարձած անձանց համար մշակել անվտանգության ծրագիր, որոնք ներառում են անձնական փաստաթղթերի հավաքում և անվտանգ վայրի ընտրություն՝ մեկնելու նպատակով: Երբեմն, բռնացողից խուսափելու և հետագա բռնության վտանգը վերացնելու լավագույն ճանապարհը դա տեղափոխվելը և նոր ինքնություն հաստատելն է: Նման փոփոխությունների ճանապարհով գնալու դեպքում, օգտակար կլինի նաև ստանալ Սոցիալական Ապահովության նոր համար:

Թեպետև, Սոցիալական Ապահովությունը սովորական կարգով համարներ չի հատկացնում, մենք դա կանենք, եթե փաստերը վկայեն այն մասին, որ Դուք ենթարկվել եք բռնության կամ ոտնձգության, կամ Ձեր կյանքին վտանգ է սպառնում:

Նոր համարի դիմում ներկայացնելը դա կարևոր որոշում է: Դա կարող է անդրադառնալ դաշնային և նահանգային գործակալությունների, գործատուների և այլոց հետ Ձեր հարաբերությունների վրա. Ձեր ֆինանսական, բժշկական, աշխատանքային և այլ գրանցումները կլինեն Ձեր նախկին Սոցիալական Ապահովության համարի և անվան (եթե փոխեք Ձեր անունը) ներքո: Եթե պատրաստվում եք փոխել Ձեր անունը, ապա արեք դա նախքան նոր համար ստանալու նպատակով դիմում ներկայացնելը:

Ինչպե՞ս դիմել նոր համարի համար՝

Դուք պետք է անձամբ ներկայանաք Սոցիալական Ապահովության ցանկացած գրասենյակ: Մենք կօգնենք Ձեզ լրացնել նոր համարի դիմումը և նոր համար ունենալու անհրաժեշտությունը բացատրող հայտարարությունը: Ի լրումն, Դուք պետք է ներկայացնեք՝

- Բռնության, ոտնձգության կամ կյանքին վտանգ սպառնացող իրավիճակը հավաստող վկայություն;
- Սոցիալական ապահովության Ձեր ներկայիս համարը;
- Փաստաթղթեր, որոնք կհավաստեն Ձեր՝
  - — ԱՄՆ քաղաքացիությունը կամ աշխատանքի թույլտվությամբ ներգաղթողի կարգավիճակը;
  - — Տարիքը; և
  - — Ինքնությունը;
- Ձեր անվան օրինական փոփոխության հավաստիքը՝ անունը փոխելու դեպքում:

Մեզ նաև անհրաժեշտ կլինի տեսնել այն փաստաթղթերը, որոնք կհավաստեն, որ այն երեխաները՝ ում համար նոր համար եք հայցում գտնվում են Ձեր խնամքի տակ, ինչպես նաև իրենց ԱՄՆ քաղաքացիությունը, տարիքը և ինքնությունը հաստատող փաստաթղթերը:

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն կա՛մ բնօրինակներ, կա՛մ դրանց թողարկող գործակալության կողմից հաստատված կրկնօրինակներ: Մենք չենք կարող ընդունել փաստաթղթերի լուսապատճեներ կամ նոտարական հաստատումով կրկնօրինակներ: Մենք կարող ենք մեկ փաստաթուղթը օգտագործել երկու նպատակով: Օրինակ, մենք կարող ենք դիտարկել Ձեր ԱՄՆ անձնագիրը և՛ որպես Ձեր քաղաքացիության, և՛ որպես Ձեր ինքնության հավաստիք: Կամ մենք կարող ենք դիտարկել Ձեր ԱՄՆ անձնագիրը և՛ որպես Ձեր տարիքի, և՛ որպես Ձեր քաղաքացիության հավաստիք:

Այնուամենայնիվ, Դուք պետք է ներկայացնեք առնվազն երկու առանձին փաստաթուղթ:

Մենք Ձեզ փոստով կուղարկենք Ձեր համարը և քարտը՝ Ձեր մասին ամբողջական տեղեկատվությունը մեր տրամադրության տակ ունենալուց և Ձեր փաստաթղթերը դրանք թողարկող գրասենյակների հետ ճշգրտելուց անմիջապես հետո:

Քաղաքացիություն կամ ներգաղթողի կարգավիճակ՝

ԱՄՆ քաղաքացի լինելու դեպքում. մենք կարող ենք ընդունել միայն որոշակի փաստաթղթեր, որպես Ձեր ԱՄՆ քաղաքացիության հավաստիք: Դրանց թվում են՝ ԱՄՆ ծննդյան վկայականը կամ ԱՄՆ անձնագիրը:

Ոչ քաղաքացի լինելու դեպքում. Ձեր ԱՄՆ ներգաղթողի կարգավիճակը հավաստելու նպատակով, Դուք պետք է մեզ ներկայացնեք Ձեր ներկայիս ներգաղթման փաստաթուղթը, ինչպես օրինակ՝ Ձեր Ձևաթուղթ I-94-ը, *Ժամանման/Մեկնման Գրանցումը* (Arrival/Departure Record), որտեղ կարտացոլվի Ձեր աշխատանքի թույլտվության համար ընդունման կարգը (դասը), կամ Ձևաթուղթ I-766-ը (*Աշխատանքի Ընդունվելու Լիազորության Փաստաթուղթ,* աշխատանքի *թույլտվություն*) *Employment Authorization Document* (EAD, work permit)*:* Եթե Դուք F-1 կամ M-1 ուսանող եք, Դուք նույնպես պետք է մեզ ներկայացնեք Ձեր Ձևաթուղթ I-20-ը՝ *Իրավասության Վկայական Ոչ ներգաղթած Ուսանողի Կարգավիճակի համար* (*Certificate of Eligibility for Nonimmigrant Student Status)*: Եթե Դուք J-1 կամ J-2 Փոխանակման ծրագրով այցելու եք, ապա պետք է ներկայացնեք Ձեր Ձևաթուղթ DS-2019-ը՝ *Իրավասության Վկայական Փոխանակման Ծրագրով Այցելուի Կարգավիճակի համար (Certificate of Eligibility for Exchange Visitor Status)*:

Տարիք՝

ԱՄՆ-ում ծնված լինելու դեպքում՝ Դուք պետք է ներկայացնեք Ձեր ծննդյան վկայականը՝ եթե ունեք այն: Եթե ծննդյան վկայականը առկա չէ, մենք կարող ենք ընդունել Ձեր՝

- Կրոնական գրանցումը, որը կատարվել է մինչև 5 տարեկան հասակը, որտեղ արտացոլված է ծննդյան տարեթիվը;
- Ծննդյան մասին ԱՄՆ հիվանդանոցի գրանցումը; կամ
- ԱՄՆ անձնագիրը:

Արտասահմանում ծնված լինելու դեպքում՝ Դուք պետք է ներկայացնեք Ձեր արտասահմանյան ծննդյան վկայականը՝ եթե ունեք այն կամ եթե կարողեք ստանալ դրա կրկնօրինակը 10 աշխատանքային օրվա ընթացքում: Այն ստանալու անհնարինության դեպքում, մենք կարող ենք ընդունել Ձեր՝

- Արտասահմանյան անձնագիրը;
- I-551-ը, *Մշտական Բնակության Քարտը (Permanent Resident Card)*;
- Ձևաթուղթ I-766, *Աշխատանքի Ընդունվելու Լիազորության քարտը (Employment Authorization Card)* (աշխատանքի թույլտվություն) (EAD, work permit) տրված DHS-ի կողմից; կամ
- I-94-ը, *Ժամանման/Մեկնման Գրանցումը (Arrival/Departure Record)*:

Ինքնություն՝

Որպես ինքնության հավաստիք՝ մենք կարող ենք ընդունել միայն որոշակի փաստաթղթեր: Ընդունելի փաստաթուղթը պետք է լինի վավերական (ոչ ժամկետանց) և պարունակի Ձեր անունը, ինքնությունը հաստատող տեղեկատվություն և ցանկալի է թարմ լուսանկար:

ԱՄՆ քաղաքացի լինելու դեպքում. որպես ինքնության հավաստիք՝ Սոցիալական Ապահովությունը կխնդրի ներկայացնել ԱՄՆ վարորդական իրավունքը, նահանգի կողմից տրված ինքնությունը հաստատող ոչ վարորդական քարտը կամ ԱՄՆ անձնագիրը: Եթե Դուք չունեք մեր կողմից հարցվող այդ որոշակի փաստաթղթերը, ապա կխնդրենք ներկայացնել այլ փաստաթղթեր, այդ թվում՝

- Ազգագրության վկայագիր;
- ԱՄՆ քաղաքացիության վկայագիր;
- Գործատուի կողմից տրված ինքնությունը հաստատող քարտ (Employee identification card);
- Դպրոցի կողմից տրված ինքնությունը հաստատող քարտ (School identification card;);
- Առողջական ապահովագրության քարտ (Health insurance card) (ոչ Medicare քարտ); կամ
- ԱՄՆ զինվորական ինքնությունը հաստատող քարտ (U.S. military identification card):

Ոչ քաղաքացի լինելու դեպքում. Սոցիալական Ապահովությունը կխնդրի ներկայացնել Ձեր ներկայիս ներգաղթման փաստաթղթերը: Ընդունելի ներգաղթման փաստաթղթերը ներառում են Ձեր՝

- Ձևաթուղթ I-551, *Մշտական բնակության քարտը (Permanent Resident Card)*;
- Ձևաթուղթ I-94, *Ժամանման/Մեկնման Գրանցումը (Arrival/Departure Record)*՝ Ձեր վավերական արտասահմանյան անձնագրի հետ միասին; կամ
- Ձևաթուղթ I-766, *Աշխատանքի Ընդունվելու Լիազորության քարտը (Employment Authorization Card)* (աշխատանքի թույլտվություն) (EAD, work permit) տրված DHS-ի կողմից:

Ձեր քարտի վրա Ձեր անվան փոփոխումը՝

Մենք կարող ենք ընդունել միայն դատարանի որոշումով հաստատված անվան օրինական փոփոխման փաստաթուղթը, որը կուղեկցի Ձեր անվան փոփոխության հայտը:

Ձեզ անհրաժեշտ վկայության տրամադրում՝

Բռնության դեպքի լավագույն ապացույցը երրորդ անձանց կողմից տրված վկայութունն է, ինչպես օրինակ՝ ոստիկանության կամ բուժօգնության ծառայողներն են, որը նաև կնկարագրի բռնության, ոտնձգության կամ կյանքին վտանգ սպառնացող դեպքի բնույթը և լրջության աստիճանը: Այլ վկայությունները կարող են ներառել դատարանի կողմից տրված արգելող հրամանները և նամակները՝ գրված ապաստարանների, ընտանիքի անդամների, ընկերների, խորհուրդատուների կամ այլոց կողմից, որոնք տեղյակ են տեղի ունեցած ընտանեկան բռնության կամ ոտնձգության մասին: Մենք կօգնենք Ձեզ անհրաժեշտ լրացուցիչ վկայություն գտնելու հարցում:

Ձեր գրանցումներին մուտքի հնարավորության արգելափակում՝

Դուք կարող եք ընտրել Ձեր Սոցիալական Ապահովության գրանցումներին էլեկտրոնային եղանակով մուտքի հնարավորության արգելափակումը: Դա անելուց հետո, ոչ ոք, այդ թվում նաև Դուք, չի կարողանա ստանալ կամ փոխել Ձեր անձնական տվյալները առցանց կամ մեր ավտոմատացված հեռախոսային ծառայության միջոցով: Եթե արգելափակում եք Ձեր անձնական հաշվին մուտքի հնարավորությունը, սակայն հետագայում փոխում եք Ձեր մտադրությունը, կարող եք դիմել Սոցիալական Ապահովության Ծառայություն՝այն ապաարգելափակելու խնդրանքով: Հետևե՛ք ***www.socialsecurity.gov/blockaccess*** հղումով՝ Ձեր անձնական հաշվի էլեկտրոնային մուտքի հնարավորությունը արգելափակելու նպատակով:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Ընտանեկան բռնության ազգային թեժ գիծ
National Domestic Violence Hotline
1-800-799-SAFE (7233)
(TTY) **1-800-787-3224**

Securing today and tomorrow

Social Security Administration
Publication No. 05-10093-AM | August 2017
Նոր Համարներ Ընտանեկան Բռնության Զոհերի Համար
New Numbers for Domestic Violence Victims (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: